# «ՏԵՔՍ» ՓԲԸ

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

*2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*
*Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

*«ՏԵՔՍ» ՓԲԸ*

## Բովանդակություն


Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն ........ 1

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն ........ 2

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն ........ 3

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն ........ 4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ ........ 6

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկություններ ........ 6
2. Հիմնական գործունեությունը ........ 6
3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ........ 6
4. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ ........ 11
5. Ֆինանսական հաշվետվությունների վերադասակարգում և վերահաշվարկ ........ 12
6. Հիմնական միջոցներ ........ 14
7. Գուդվիլ ........ 14
8. Ներդրումներ ասոցացված կազմակերպություններում ........ 15
9. Տրված փոխառություններ ........ 15
10. Պաշարներ ........ 15
11. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր ........ 15
12. Դրամական միջոցներ ........ 16
13. Սեփական կապիտալ ........ 16
14. Վարկեր և փոխառություններ ........ 16
15. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր ........ 16
16. Պահուստներ ........ 17
17. Հասույթ, վաճառքի ինքնարժեք ........ 17
18. Իրացման ծախսեր ........ 17
19. Վարչական ծախսեր ........ 18
20. Այլ եկամուտներ և ծախսեր ........ 18
21. Ֆինանսական եկամուտներ և ծախսեր ........ 18
22. Այլ օգուտ (կորուստ) ........ 19
23. Շահութահարկ ........ 19
24. Ընդհատված գործառնություններ ........ 19
25. Իրական արժեք և Ռիսկերի կառավարում ........ 20
26. Պայմանականություններ ........ 21
27. Գործարքներ կապակցված կողմերի միջև ........ 23
28. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր ........ 24

**ՖԻՆՍ ԱՈՒԴԻՏ ՓԲԸ**

Հասցե՝ Երևան, Պարոնյան 9 բն. 12

Էլ. հասցե՝ info@fins.am

Հեռ.՝ +374 60 525 025

**FINS AUDIT CJSC**

Address Yerevan, Paronyan str. 9 n. 12

Email info@fins.am

Phone +374 60 525 025

# Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՏԵՔՍ» Փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

## *Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՏԵՔՍ» Փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և նրա դուստր կազմակերպությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

## *Կարծիքի հիմքեր*

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

## *Ղեկավարության և Բաժնետերերի ընդհանուր ժողովի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Բաժնետերերի ընդհանուր ժողովը պատասխանատու է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

## *Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

**ՖԻՆՍ ԱՈՒԴԻՏ ՓԲԸ**

Հասցե՝ք. Երևան, Պարոնյան 9 բն. 12

Էլ. հասցե՝info@fins.am

Հեռ.՝+374 60 525 025

**FINS AUDIT CJSC**

Address Yerevan, Paronyan str. 9 h. 12

Email info@fins.am

Phone +374 60 525 025

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

▶ հատնորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.

▶ ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

▶ գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

▶ եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձությունները ու հանգամանքները կարող են հանգեցնել խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը.

▶ գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Բաժնետերերի ընդհանուր ժողովին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«ՖԻՆՍ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

1 հուլիսի, 2024թ.

ՀՀ, ք. Երևան

Տնօրեն Արմինե Ավագյան

**Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն**
**2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

| *(հազար դրամ)* | | | |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | **Ծնթգ.** | **2023թ.** | **2022թ.** |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 6 | 56,862 | 40,324 |
| Ոչ նյութական ակտիվներ | | 514 | 725 |
| Գուդվիլ | 7 | 984,264 | 999,246 |
| Ներդրումներ ասոցացված կազմակերպություններում | 8 | 20,312 | 59,278 |
| Տրված փոխառություններ | 9 | 4,867,830 | 12,977,720 |
| Հետաձգված հարկ ակտիվներ | 23 | 29,508 | 16,644 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | | **5,959,290** | **14,093,937** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Պաշարներ | 10 | 202,417 | 280,439 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 11 | 1,009,412 | 2,031,056 |
| Տրված փոխառություններ | 9 | 9,125,319 | 55,677 |
| Դրամական միջոցներ | 12 | 151,345 | 82,453 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | | - | 2,238 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | **10,488,493** | **2,451,863** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **16,447,783** | **16,545,800** |
| **ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Համալրված բաժնետիրական կապիտալ | 13 | 17,501 | 1 |
| Կապիտալի բաշխում | 13 | (762,333) | (665,267) |
| Չբաշխված շահույթ | | 6,477,942 | 5,969,769 |
| Չվերահսկվող բաժնեմաս | | (4,614) | (3,750) |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **5,728,496** | **5,300,753** |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Վարկեր և փոխառություններ | 14 | 1,201,307 | 1,051,789 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **1,201,307** | **1,051,789** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Վարկեր և փոխառություններ | 14 | 8,542,777 | 8,371,659 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 15 | 878,782 | 1,752,497 |
| Պահուստներ | 16 | 96,421 | 69,102 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | **9,517,980** | **10,193,258** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **16,447,783** | **16,545,800** |

Տնօրեն՝ Գլխավոր հաշվապահ՝

Վ. Հովակիմյան Ա. Մկոյան

«ՏԵՔՍ» “TEX” «ТЕКС» 00474265

*Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Խմբի ղեկավարության կողմից 2024թ. հուլիսի 1-ին:*

## ***Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***

| (հազար դրամ) | Ծնթգ. | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|---|
| Շարունակվող գործունեություն | | | |
| Հասույթ | 17 | 3,859,826 | 5,421,368 |
| Վաճառքի ինքնարժեք | 17 | (1,912,149) | (2,761,748) |
| **Համախառն շահույթ** | | **1,947,677** | **2,659,620** |
| Իրացման ծախսեր | 18 | (199,446) | (209,594) |
| Վարչական ծախսեր | 19 | (324,042) | (245,556) |
| Այլ եկամուտ | 20 | 44,090 | 18,709 |
| Այլ ծախս | 20 | (134,647) | (51,218) |
| Ֆինանսական եկամուտ | 21 | 649,596 | 863,790 |
| Ֆինանսական ծախսեր | 21 | (726,234) | (884,827) |
| Այլ օգուտ (կորուստ) | 22 | (207,068) | 328,169 |
| **Զուտ շահույթ նախքան հարկումը** | | **1,049,926** | **2,479,093** |
| Շահութահարկի գծով ծախս | 23 | (237,693) | (407,703) |
| **Շարունակվող գործառնություններից զուտ շահույթ** | | **812,233** | **2,071,390** |
| Ընդհատված գործառնությունների արդյունքներ | 24 | 45,259 | 59,191 |
| **Հաշվետու տարվա շահույթ** | | **857,492** | **2,130,581** |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | | - | - |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | | **857,492** | **2,130,581** |
| ***Այդ թվում.*** Չվերահսկվող բաժնեմասին վերագրվող | | (681) | (14) |
| Մայր կազմակերպության սեփականատերերին վերագրվող | | 858,173 | 2,130,595 |

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն**
***2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***

| (հազար դրամ) | Կանոնադրական կապիտալ | Կապիտալի բաշխում | Չբաշխված շահույթ (չծածկված վնաս) | Ընդամենը մայր կազմակերպության սեփականատերերին վերագրվող սեփական կապիտալ | Չվերահսկվող բաժնեմաս | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| **2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **1** | **(310,915)** | **3,839,174** | **3,528,260** | **(3,736)** | **3,524,524** |
| Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս) | - | - | 2,130,595 | 2,130,595 | (14) | 2,130,581 |
| Այլ բաշխումներ | - | (354,352) | - | (354,352) | - | (354,352) |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **1** | **(665,267)** | **5,969,769** | **5,304,503** | **(3,750)** | **5,300,753** |
| **2023թ հունվարի 1-ի դրությամբ** | **1** | **(665,267)** | **5,969,769** | **5,304,503** | **(3,750)** | **5,300,753** |
| Կանոնադրական կապիտալի համալրում | 17,500 | - | - | 17,500 | | 17,500 |
| Հայտարարագրված շահաբաժիններ | - | - | (350,000) | (350,000) | - | (350,000) |
| Հաշվետու տարվա շահույթ | - | - | 858,173 | 858,173 | (681) | 857,492 |
| Դուստր ընկերությունների լուծարում | - | - | - | - | (183) | (183) |
| Այլ բաշխումներ | - | (97,066) | - | (97,066) | - | (97,066) |
| **2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **17,501** | **(762,333)** | **6,477,942** | **5,733,110** | **(4,614)** | **5,728,496** |

## Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
## *2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | |
| Շահույթ տարվա համար | 857,492 | 2,130,595 |
| *Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով* | | |
| Շահութահարկի գծով ծախս | 242,333 | 407,191 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 14,027 | 23,637 |
| Ֆինանսական ակտվների պարտքային կորստի գծով պահուստին հատկացումներ | 40,384 | 23,367 |
| Վնաս բաժնետոմսերի օտարումից | 12,794 | - |
| Գուդվիլի արժեզրկում | 2,005 | - |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումում ներդրողի բաժնեմասի փոփոխություն | 38,966 | 78,759 |
| Զուտ ֆինանսական ծախս | 76,638 | 21,037 |
| Փոխարժեքային տարբերություններից եկամուտ և ծախսեր | 152,478 | (406,936) |
| Այլ եկամուտներ և ծախսեր | (7,931) | 16,752 |
| **Գործառնական գործունեությունից ստացված դրամական ներհոսք՝ նախքան գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխությունները** | **1,429,186** | **2,294,402** |
| **Գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխություններ** | | |
| Պաշարներ | 78,022 | 1,322,046 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 1,058,722 | 3,352,102 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | (684,070) | (4,392,136) |
| **Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր՝ նախքան շահութահարկ** | **1,881,860** | **2,576,414** |
| Վճարված շահութահարկ | (445,575) | (582,105) |
| **Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների զուտ հոսքեր** | **1,436,285** | **1,994,309** |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերումների գծով վճարներ | (33,932) | (10,011) |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվներ վաճառքից մուտքեր | 3,995 | - |
| Դուստր ընկերությունների ձեռքբերում | - | (443,348) |
| Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից ելքեր | - | (5,063) |
| Փոխառությունների տրամադրումից մուտքեր (ելքեր) | (817,004) | 2,266,171 |
| Ստացված տոկոսներ | 437,660 | 731,055 |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(409,281)** | **2,538,804** |

| | | |
|---|---|---|
| **Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Բաժնետոմսերի թողարկում | 17,500 | - |
| Վարկերից և փոխառություններից մուտքեր (ելքեր) | 101,943 | (3,769,634) |
| Վճարված տոկոսներ | (726,234) | (884,827) |
| Վճարված շահաբաժիններ | (350,000) | - |
| **Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(956,791)** | **(4,654,461)** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ** | 70,213 | (121,348) |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (1,321) | (1,716) |
| **Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեսկզբի դրությամբ** | **82,453** | **205,517** |
| **Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեվերջի դրությամբ** | **151,345** | **82,453** |

# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկություններ

**Կազմակերպության մասին**

«ՏԵՔՍ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ Ընկերություն) ստեղծվել է 20.09.2017թ ստեղծված «Էներգոտեխսպասարկում» ՓԲԸ անվանափոխության ճանապարհով:

Ընկերության կանոնադրությունը գրանցվել է ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, գրանցման թիվ 286.120.974724, հարկային հաշվառման համարը՝ 00474265:
Ընկերության իրավաբանական հասցեն է ք. Երևան, Մովսես Խորենացի 33:

Ընկերության կառավարման մարմիններն են՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողովը
- Ընկերության տնօրենը:

## 2. Հիմնական գործունեությունը

Ընկերության հիմնական գործունեության տեսակներից է հանդիսանում բնակելի, հասարակական և արտադրական շենքերի շինարարությունը:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

### 2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ):

### 2.2 Չափման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

### 2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Խմբի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (դրամ): Այն հանդիսանում է նաև Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

### 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

## 3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

### 3.1 Համախմբման հիմքերը

***Դուստր ընկերություններ***

Դուստր են համարվում այն ընկերությունները, որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Խումբն իրավունք ունի ուղղակիորեն կամ անուղղակիորեն կառավարել ընկերության ֆինանսական և տնտեսական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտներ ստանալու նպատակով: Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներառված են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած վերահսկողությունը ստանձնելու ամսաթվից մինչև վերահսկողության դադարեցման ամսաթիվը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունները.

| ***Ընկերության անվանումը*** | ***Գրանցման երկիր*** | ***Գործունեության ոլորտը*** | ***Ձեռք բերման ամսաթիվը*** | ***2023թ. մասնաբաժին տոկոս*** | ***2022թ. մասնաբաժին տոկոս*** |
|---|---|---|---|---|---|
| «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ | ՀՀ | Էներգետիկ կառույցների նախագծում, նախագծերի փորձաքննություն | 24.12.2018 | 100% | 100% |
| «Նաշ Դոմ» ՓԲԸ | ՀՀ | Մանրածախ առևտուր | 24.12.2018 | 100% | 100% |
| «Նեֆտպրոդուկտինվեստ» ՓԲԸ | ՀՀ | Մանրածախ առևտուր | 24.12.2018 | 100% | 100% |
| «Հայթեք» ՓԲԸ | ՀՀ | Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի բնագավառում այլ գործունեություն | 18.09.2018 | լուծարված | 100% |
| «Արար Արտ» ՓԲԸ | ՀՀ | Ծառայությունների մատուցում, | 13.05.2020 | լուծարված | 90% |
| «Տ-Տելեկոմ» ՍՊԸ | ՀՀ | Մասնագիտական, գիտական և տեխնիկական այլ գործունեություն | 19.05.2020 | 100% | 100% |
| «Մաստեր Սիթի» ՓԲԸ | ՀՀ | Շինանյութի մեծածախ առևտուր | 17.08.2020 | 100% | 100% |
| «Էներգոնորոգում» ԲԲԸ | ՀՀ | Տրանսֆորմատորների, էլեկտրական շարժիչների, գեներատորների, բաշխիչ վահանների և կոմուտացիոն սարքվածքների նորոգում և տեխնիկական սպասարկում | 31.08.2020 | 100% | 100% |
| «Թի-Էլ-Էս» ՓԲԸ | ՀՀ | Բեռնափոխադրման կազմակերպման միջնորդական գործունեություն | 15.11.2022 | 60.2% | 60.2% |

***Համախմբման արդյունքում չներառված գործարքներ***

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ամբողջովին բացառվում են ներխմբային հաշիվների մնացորդները և գործարքները, ինչպես նաև ներխմբային գործարքներից առաջացած բոլոր չիրացված օգուտները:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում համախմբվել է նաև «Դամալա Գրուպ» ՍՊԸ-ում Ընկերության որպես ասոցիացված կազմակերպությունում հաշվառվող ներդրումներ ունեցած 50 տոկոսի բաժնեմասը՝ հաշվառված բաժնեմասնակցության մեթոդով:

### 3.2 Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը և ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսերը, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, գտնվելու տեղանքի վերականգնման ծախսերը և կապիտալացված փոխառության ծախսերը: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, ապա այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը կամ վնասը որոշվում է՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ, և ճանաչվում է զուտ հիմունքով այլ եկամուտ/այլ ծախս հոդվածում շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Ընկերություն կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, և դրա արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում առաջանալուն պես:

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործմանը պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործմանը պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Հիմնական միջոցների համար սահմանված օգտակար ծառայության ժամկետներն են՝

| | |
|---|---|
| *շենքեր* | *20 տարի* |
| *սարքավորումներ* | *5 տարի* |
| *արտադրատնտեսական գույք* | *8 տարի* |
| *հաշվողական և համակարգչային տեխնիկա* | *1 տարի* |

### 3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:
Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար:
Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով գծային մեթոդը:
Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

| | |
|---|---|
| *Համակարգչային ծրագրեր* | *3-10 տարի* |
| *Այլ ոչ նյութական ակտիվներ* | *1-10 տարի* |

Ոչ նյութական ակտիվն ապաճանաչվում է օտարման ժամանակ,կամ երբ օգտագործումից կամ օտարումից այլևս ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ կորուստը ,որը չափվում է որպես օտարումից զուտ մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն,ճանաչվում է շահույթում կամ վնասում,երբ այդ ակտիվն ապաճանաչվում է:

### 3.4 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արտարժութային շուկա ներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը, սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Փոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

### 3.5 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և հնարավոր իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների հնարավոր իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջին մուտք՝ առաջին ելք» ԱՄԱԵ բանաձևով: Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ ծրագրերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:
Երբ պաշարները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

### 3.6 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները), և պարգևավճարները:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:

### 3.7 Հասույթ

Խումբը հասույթը պետք է չափի ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը հաշվի է առնում Խմբի կողմից տրամադրվող ցանկացած առևտրական զեղչերի, ժամկետից շուտ վճարման զեղչերի և քանակային զիջումների գումարները:

Խումբը հասույթում պետք է ներառի ստացված կամ ստացվելիք տնտեսական օգուտների միայն այն համախառն ներհոսքը, որը պատկանում է Խմբին պատկանող Ընկերությանը: Խմբին պատկանող Ընկերությունը հասույթում չպետք է ներառի երրորդ անձանց անունից հավաքագրված բոլոր գումարները, օրինակ՝ վաճառքից հարկերը, ապրանքների և ծառայությունների գծով հարկերը և ավելացված արժեքի հարկը:

### 3.8 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խմբին պատկանող Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Երբ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է, Խմբին պատկանող Ընկերությունը պետք է այն չափի գործարքի գնով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները):

### 3.9 Ակտիվների արժեզրկում

Արժեզրկումից կորուստը առաջանում է, երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող գումարը: Ակտիվի փոխհատուցվող գումարը դրա իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնն է:

Իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումները, ակտիվի վաճառքից ստացվող գումարն է՝ իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «անկախ կողմերի միջև գործարքում»՝ հանած օտարման ծախսումները:

Օգտագործման արժեքը ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքն է, որն ակնկալվում է ստանալ ակտիվից:

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է գնահատի՝ առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Ընկերությունը պետք է գնահատի ակտիվի փոխհատուցվող գումարը: Եթե արժեզրկման որևէ հայտանիշ չկա, ապա անհրաժեշտ չէ գնահատել փոխհատուցվող գումարը:

Ընկերությունը արժեզրկումից կորուստը պետք է անմիջապես ճանաչի շահույթում կամ վնասում:
Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է գնահատի, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի հնարավոր է, որ նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստը այլևս գոյություն չունի կամ նվազել է:

Ընկերությունը արժեզրկումից կորուստի հակադարձումը անմիջապես պետք է ճանաչի շահույթում կամ վնասում:

### 3.10 Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Խմբին պատկանող Ընկերությունը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Զեղչման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում,բայց բացահայտվում են,երբ տնտեսական օգուտների մուտքը հավանական է համարվում:

Պայմանական պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում այն դեպքում,երբ հավանական է պարտավորությունը լուծելու համար տնտեսական օգուտների արտահոսք և այդ արտահոսքը կարող է խելամտորեն գնահատվել: Դրանք բացահայտվում են այնքան ժամանակ, մինչև տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է:

### 3.11 Շահութահարկ

Շահութահարկը ներառում է բոլոր ազգային և արտերկրյա հարկերը, որոնց հիմքում ընկած է հարկվող շահույթը:

Շահութահարկի գումարները բաղկացած են ընթացիկ հարկից և հետաձգված հարկից: Ընթացիկ հարկը ընթացիկ ժամանակաշրջանի կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթի (հարկային վնասի) գծով վճարման (փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարն է: Հետաձգված հարկը ապագա ժամանակաշրջաններում վճարման կամ փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարն է, որը սովորաբար կազմակերպության կողմից իր ակտիվներն ու պարտավորությունները ընթացիկ հաշվեկշռային արժեքով փոխհատուցելու կամ մարելու արդյունք է, և տվյալ պահին չօգտագործված հարկային վնասները և հարկային զեղչերը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հարկային հետևանք:

### 3.12 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները տոկոսային և այլ ծախսումներն են, որոնք Խումբը կրում է՝ կապված փոխառու միջոցների ստացման հետ:

Խումբը բոլոր փոխառության ծախսումները պետք է ճանաչի որպես ծախս՝ շահույթում կամ վնասում՝ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվել են:

## 4. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

### Գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Ընկերության ղեկավարությունից կիրառել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն եկամուտների ու ծախսերի, ակտիվների, պարտավորությունների և կից բացահայտումների վրա, ինչպես նաև պայմանական պարտավորությունների բացահայտումների վրա առանձին ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ: Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերլուծվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք կարող են տեղի ունենալ որոշակի հանգամանքների պարագայում: Այս գնահատումների և ենթադրությունների վերաբերյալ անորոշությունը կարող է հանգեցնել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումներ: Առավել էական ազդեցություն ունեցող գնահատումները և դատողությունները հետևյալն են.

*Առևտրային դեբիտորական պարտքերի և այլ ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Ղեկավարությունը պարբերաբար վերանայում է իր Ֆինանսական ակտիվների արժեզրկման հայտանիշները: Ղեկավարությունը անհրաժեշտության դեպքում կիրառում է իր մասնագիտական դատողությունները՝ գնահատելու համար ցանկացած արժեզրկումից կորուստների գումարը:

Ղեկավարությունը գնահատում է ապագա դրամական հոսքերում փոփոխությունները՝ հիմնվելով այն դիտարկելի տվյալների վրա, որոնք մատնանշում են գործընկերների վճարունակության մակարդակների բացասական փոփոխությունները, կամ ազգային կամ տեղական տնտեսական իրավիճակների փոփոխությունները, որոնք որևէ կերպ առնչվում են ակտիվների արժեզրկման հետ: Սեփական փորձից ելնելով՝ Ընկերությունը կիրառում է իր մասնագիտական դատողությունները ակտիվների վերաբերյալ դիտարկելի տեղեկատվության ճշգրտման համար՝ ընթացիկ իրավիճակը արտացոլելու նպատակով:

## 5. Ֆինանսական հաշվետվությունների վերադասակարգում և վերահաշվարկ

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի ներկայացումը փոխվել է ուղղակի մեթոդից անուղղակի մեթոդի:

2022թ-ի ընթացքում կատարված ձեռնարկատիրական գործունեության միավորումներից ճանաչված լրացուցիչ գումարները վերադասակարգվել են Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր-ից Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր:
Փոխարժեքային տարբերություններից եկամուտները և ծախսերը ճշգրտվել են Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերում, ինչպես նաև՝ Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքերում և Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքերում համապատասխանաբար:

2023թ-ի ներկայացմանը համապատասխանելու նպատակով 2022թ-ի Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվության մեջ կատարվել են հետևյալ վերադասակարգումները.

| *(հազար դրամ)*<br>**Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն** | Նախկինում գրանցված | Վերահաշվարկված | Վերադասակարգում |
|---|---|---|---|
| Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների զուտ հոսքեր | 1,486,258 | 1,994,309 | 508,051 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 657,191 | 2,538,804 | 1,881,613 |
| Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | (2,264,797) | (4,654,461) | (2,389,664) |

2022թ. Գուդվիլի հաշվարկում ՝ տարվա ընթացքում կատարված ձեռնարկատիրական գործունեության միավորումներից ճանաչված լրացուցիչ գումարներում, սխալմամբ ներառվել էր չճշգրտված ձեռքբերման արժեք և նույն գումարով կրեդիտորական պարտք էր ճանաչվել Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Սույն համախբված ֆինանսական հաշվետվություններում սխալը ճշգրտվել է:

| *(հազար դրամ)*<br>**Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն** | Նախկինում գրանցված | Վերահաշվարկված | Վերահաշվարկ |
|---|---|---|---|
| Գուդվիլ | 1,088,628 | 999,246 | (89,382) |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 1,841,879 | 1,752,497 | (89,382) |

2023թ-ի ֆինանսական հաշվետվություններում, Խմբի բաժնետիրոջը տրամադրված փոխառության իրական արժեքով ճանաչելու արդյունքում, ճանաչվել է կապիտալի բաշխում: 2023թ-ի ներկայացմանը համապատասխանելու նպատակով 2022թ-ի ֆինանսական հաշվետվություններում կատարվել է հետևյալ վերահաշվարկները.

| *(հազար դրամ)* | Նախկինում գրանցված | Վերահաշվարկված | Վերահաշվարկ |
|---|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն** | | | |
| Տրված փոխառություններ | 13,510,252 | 12,977,720 | (532,532) |
| Կապիտալի բաշխում | - | (665,267) | (665,267) |
| Չբաշխված շահույթ (չծածկված վնաս) | 5,837,035 | 5,969,769 | 132,734 |
| **Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն** | | | |
| Ֆինանսական եկամուտ | 731,061 | 863,796 | 132,735 |
| | 13,510,252 | 12,977,720 | (532,532) |

## 6. Հիմնական միջոցներ

| *(հազար դրամ)* | Մեքենա - սարքավորումներ | Տրանսպորտային միջոցներ | Տնտեսական գույք, արտադրական գույք, այլ հիմնական միջոցներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| ***Սկզբնական արժեք*** | | | | |
| **2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **165,268** | **15,379** | **46,953** | **227,600** |
| Ավելացումներ | 8,059 | - | 1,952 | 10,011 |
| Օտարումներ,դուրս գրումներ | - | - | - | - |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **173,327** | **15,379** | **48,905** | **237,611** |
| **2023թ հունվարի 1-ի դրությամբ** | **173,327** | **15,379** | **48,905** | **237,611** |
| Ավելացումներ | 25,769 | 1,345 | 6,818 | 33,932 |
| Օտարումներ,դուրս գրումներ | (12,888) | (1,166) | (7) | (14,061) |
| **2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **186,208** | **15,558** | **55,716** | **257,482** |
| ***Կուտակված մաշվածություն*** | | | | |
| **2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **134,501** | **14,583** | **24,709** | **173,793** |
| Տարվա ծախս | 15,148 | 340 | 8,006 | 23,494 |
| Օտարումներ,դուրս գրումներ | - | - | - | - |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **149,649** | **14,923** | **32,715** | **197,287** |
| **2023թ հունվարի 1-ի դրությամբ** | **149,649** | **14,923** | **32,715** | **197,287** |
| Տարվա ծախս | 7,991 | 340 | 5,485 | 13,816 |
| Օտարումներ,դուրս գրումներ | (9,310) | (1,166) | (7) | (10,483) |
| **2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **148,330** | **14,097** | **38,193** | **200,620** |
| ***Զուտ հաշվեկշռային արժեք*** | | | | |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **23,678** | **456** | **16,190** | **40,324** |
| **2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **37,878** | **1,461** | **17,523** | **56,862** |

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի գրավադրված հիմնական միջոցներ:

## 7. Գուդվիլ

| | |
|---|---|
| **2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **555,898** |
| Տարվա ընթացքում կատարված ձեռնարկատիրական գործունեության միավորումներից ճանաչված լրացուցիչ գումարներ | 443,348 |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **999,246** |
| | |
| **2023թ հունվարի 1-ի դրությամբ** | **999,246** |
| Գուդվիլի արժեզրկում | (2,005) |
| Ներդրումների օտարում | (12,977) |
| **2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 984,264 |

2022թ գուդվիլի ավելացումը կատարվել է «Էներգանորոգում» ԲԲԸ-ն՝ 31.08.2020թ կնքված բաժնետոմսերի առք ու վաճառքի պայմանագրի «պայմանով վաճառքի գին» հոդվածի իրագործման արդյունքում:

## 8. Ներդրումներ ասոցացված կազմակերպություններում

Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրում

| | |
|---|---|
| **2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **132,974** |
| «Դամալա Գրուպ» ՍՊԸ Զուտ ակտիվներում ներդրողի բաժնեմասի փոփոխություն ներդրման արդյունքում | 5,063 |
| Զուտ ակտիվներում ներդրողի բաժնեմասի փոփոխություն | (78,759) |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **59,278** |
| «Դամալա Գրուպ» ՍՊԸ Զուտ ակտիվներում ներդրողի բաժնեմասի փոփոխություն | (38,966) |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **20,312** |

## 9. Տրված փոխառություններ

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| **Ոչ ընթացիկ** | | |
| Երկարաժամկետ փոխառություններ | 4,908,284 | 12,977,720 |
| Ակնկալվող պարտքային կորստի պահուստ | (40,454) | - |
| | **4,867,830** | **12,977,720** |
| **Ընթացիկ** | | |
| Երկարաժամկետ վարկերի և փոխառությունների կարճաժամկետ մաս | 9,125,319 | 55,677 |
| | **9,125,319** | **55,677** |
| | **13,993,149** | **13,033,397** |

## 10. Պաշարներ

| *(հազար դրամ)* | **2023թ.** | **2022թ.** |
|---|---|---|
| Ապրանքներ | 111,189 | 164,628 |
| Նյութեր | 83,169 | 104,133 |
| Անավարտ | 571 | 1,360 |
| Այլ | 7,488 | 10,318 |
| | **202,417** | **280,439** |

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի գրավադրված պաշարներ:

### 11. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 913,510 | 1,923,043 |
| Պարտքային կորստի գծով պահուստ | (23,297) | (23,367) |
| **Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ** | **890,213** | **1,899,676** |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 104,013 | 116,228 |
| Դեբիտորական պարտքեր բյուջեին | 14,406 | 14,114 |
| Այլ ընթացիկ դեբիտորական պարտքեր | 780 | 1,038 |
| | **1,009,412** | **2,031,056** |

### 12. Դրամական միջոցներ

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Դրամական միջոցներ բանկային հաշիվներում | 109,391 | 41,776 |
| Կանխիկ դրամը դրամարկղում | 41,954 | 40,677 |
| | **151,345** | **82,453** |

### 13. Սեփական կապիտալ

*Կանոնադրական կապիտալ*

2023թ. Կանոնադրական կապիտալում կատարվել է համալրում, որի արդյունքում Մայր կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 17,501,000 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր մեկ հազար) ՀՀ դրամ,որը կազմում է 1000 (մեկ հազար) հատ հասարակ անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 17,501 (տասնյոթ հազար հինգ հարյուր մեկ) ՀՀ դրամ:

2022թ. Մայր կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ,որը կազմում է 1000 (մեկ հազար) հատ հասարակ անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1(մեկ ) ՀՀ դրամ:

Բոլոր 1000 (մեկ հազար) բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

Կապիտալի բաշխումները վերաբերվում են բաժնետիրոջը տրված փոխառությունները սկզբնական իրական արժեքով ճանաչելու արդյունքում:

### 14. Վարկեր և փոխառություններ

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| **Ոչ ընթացիկ** | | |
| Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ | 1,201,307 | 1,051,789 |
| | **1,201,307** | **1,051,789** |
| **Ընթացիկ** | | |
| Երկարաժամկետ վարկերի և փոխառությունների կարճաժամկետ մաս | 8,542,777 | 8,371,659 |
| | **8,542,777** | **8,371,659** |
| | **9,744,084** | **9,423,448** |

2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի գործող վարկերի և փոխառությունների վերաբերյալ առկա է հետևյալ տեղեկատվությունը:

| Փոխառության տեսակը | Չափման միավոր | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|---|
| Գրավով չապահովված բանկային վարկ | ԱՄՆ դոլար | 3,587,716 | 3,488,892 |
| Գրավով չապահովված այլ փոխառություն | ԱՄՆ դոլար | 5,084,299 | 4,860,917 |
| Գրավով չապահովված բանկային վարկ | ՀՀ դրամ | - | - |
| Գրավով չապահովված այլ փոխառություն | ՀՀ դրամ | 972,880 | 959,928 |
| Գրավով չապահովված բանկային վարկ | ՌԴ ռուբլի | - | - |
| Գրավով չապահովված այլ փոխառություն | ՌԴ ռուբլի | 99,189 | 113,711 |

## 15. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| Հազար դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 472,355 | 957,956 |
| Պարտքեր հարկերի եւ այլ պարտադիր վճարների գծով | 228,751 | 453,813 |
| Ստացված կանխավճարներ | 113,563 | 283,453 |
| Հատուցումներ աշխատակիցներին | 11,524 | 258 |
| Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով | 4,858 | 2,217 |
| Այլ կրեդիտորական պարտք | 47,731 | 54,800 |
| | **878,782** | **1,752,497** |

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

## 16. Պահուստներ

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ | 96,421 | 69,102 |
| | **96,421** | **69,102** |

## 17. Հասույթ, վաճառքի ինքնարժեք

*Հասույթ*

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Ծառայությունների իրացումից | 2,151,163 | 1,937,315 |
| Աշխատանքների կատարումից | 1,078,472 | 2,559,449 |
| Ապրանքների իրացումից | 630,191 | 924,604 |
| | **3,859,826** | **5,421,368** |

*Վաճառքի ինքնարժեք*

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Ծառայությունների մատուցումից | 487,070 | 398,183 |
| Աշխատանքների կատարումից | 936,570 | 1,625,203 |
| Ապրանքների իրացումից | 488,509 | 738,362 |
| | **1,912,149** | **2,761,748** |

## 18. Իրացման ծախսեր

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Վարձակալության ծախսեր | 78,519 | 86,277 |
| Աշխատավարձ | 43,507 | 54,887 |
| Մարկետինգի և գովազդի ծախսեր | 4,673 | 2,645 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 4,425 | 9,725 |
| Այլ | 68,322 | 56,060 |
| | **199,446** | **209,594** |

## 19. Վարչական ծախսեր

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Աշխատավարձ | 225,682 | 149,466 |
| Գործուղման և ներկայացուցչական | 48,848 | 44,442 |
| Գրասենյակային,կոմունալ | 18,027 | 9,633 |
| Բանկային,աուդիտորական և խորհրդատվական | 15,135 | 22,423 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 6,279 | 11,429 |
| Փոստի,հեռահաղորդակցության | 840 | 747 |
| Չփոխհատուցվող հարկերից ծախսեր | 812 | 531 |
| Այլ | 8,419 | 6,885 |
| | **324,042** | **245,556** |

## 20. Այլ եկամուտներ և ծախսեր

*Այլ եկամուտ*

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Գործառնական վարձակալությունից եկամուտներ | 11,631 | 1,500 |
| Պարտքի զիջումից եկամուտ | 188 | - |
| Այլ եկամուտներ | 32,271 | 17,209 |
| | **44,090** | **18,709** |

*Այլ ծախս*

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Արժեկուրդային պահուստաֆոնդին հատկացում | 45,006 | 7,041 |
| Ֆինանսական ակտիվների պարտքային կորստի գծով պահուստ | 40,384 | 23,687 |
| Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր | 1,789 | 14,717 |
| Այլ ծախսեր | 47,468 | 5,773 |
| | **134,647** | **51,218** |

## 21. Ֆինանսական եկամուտներ և ծախսեր

*Ֆինանսական եկամուտ*

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Տոկոսային եկամուտ տրված փոխառություններից | 649,596 | 863,790 |
| | **649,596** | **863,790** |

*Ֆինանսական ծախսեր*

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Վարկերի և փոխառությունների գծով տոկոսային ծա | 726,234 | 884,827 |
| | **726,234** | **884,827** |

## 22. Այլ օգուտ (կորուստ)

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Փոխարժեքային տարբերություններից ծախս | (386,156) | (2,397,524) |
| Փոխարժեքային տարբերություններից եկամուտ | 232,876 | 2,804,452 |
| Վնաս բաժնետոմսերի օտարումից | (12,817) | - |
| Գուդվիլի արժեզրկում | (2,005) | - |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումում ներդրողի բաժնեմասի փոփոխություն | (38,966) | (78,759) |
| | **(207,068)** | **328,169** |

## 23. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| **Ընթացիկ շահութահարկ՝** | | |
| Ընթացիկ հարկի գծով ծախս | (253,741) | (412,267) |
| **Հետաձգված հարկեր** | | |
| Ժամանակային տարբերությունների ծագում և հակադարձում | 16,048 | 4,564 |
| **Ընդամենը ծախս շահութահարկի գծով** | **(237,693)** | **(407,703)** |

2023թ-ին և 2022թ-ին ընթացիկ հարկի կիրառելի դրույքաչափը կազմում է 18%:

**Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

| *(հազար դրամ)* | 2023թ. | % | 2022թ. | % |
|---|---|---|---|---|
| Զուտ շահույթ նախքան հարկումը | 1,049,926 | | 2,479,093 | |
| Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով | (188,987) | (18.0) | (446,237) | (18.0) |
| Չնվազեցվող ծախսեր | (48,706) | (4.6) | 38,534 | 1.6 |
| **Ընդամենը ծախս շահութահարկի գծով** | **(237,693)** | **(22.6)** | **(407,703)** | **(16.4)** |

**Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ**

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու նպատակով որոշված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային ակտիվներ և զուտ հետաձգված հարկային պարտավորություններ համապատասխանաբար 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

| Հազար դրամ | 2023թ հունվարի1-ի դրությամբ | Եկամտում ճանաչված | Ընդհատված գործառնությունների արդյունքներ | 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|---|
| Պահուստ | 12,438 | 8,102 | (3,184) | 17,356 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 4,206 | (12) | - | 4,194 |
| Տրված փոխառություններ | - | 7,282 | - | 7,282 |
| Պաշարներ | - | 1,256 | - | 1,256 |
| Հիմնական միջոցներ | - | (580) | - | (580) |
| **Զուտ հետաձգված հարկ** | **16,644** | **16,048** | **(3,184)** | **29,508** |

| Հազար դրամ | 2022թ հունվարի1-ի դրությամբ | Եկամտում ճանաչված | Ընդհատված գործառնությունների արդյունքներ | 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|---|
| Պահուստ | 10,998 | 358 | 1,082 | 12,438 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | - | 4,206 | - | 4,206 |
| Տրված փոխառություններ | - | - | - | - |
| Պաշարներ | - | - | - | - |
| Հիմնական միջոցներ | - | - | - | - |
| **Զուտ հետաձգված հարկ** | **10,998** | **4,564** | **1,082** | **16,644** |

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվել են այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց Խումբը կկարողանա օգտագործել դրանցից ստացված օգուտները:

**24. Ընդհատված գործառնություններ**

2023 թվականի ընթացքում Խումբը որոշում է կայացրել դադարեցնել երկու դուստր ձեռնարկությունների՝ «Արար Արտ» ՓԲԸ և «Հայթեք» ՓԲԸ գործունեությունը: Բացի այդ, 2024 թվականի սկզբին, Խումբը դադարեցրեց իր դուստր ձեռնարկության՝ «S-Տելեկոմ» ՍՊԸ գործունեությունը: Այս դադարեցված գործառնությունների արդյունքները ներկայացվում են առանձին որպես մեկ գումար 2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա և 2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված համեմատական տարվա համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ընդհատված գործառնություններից ֆինանսական արդյունքները 2023 թվականի և 2022 թվականի համեմատական արդյունքները հետևյալն են.

| (հազար դրամ) | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Հասույթ | 85,085 | 142,766 |
| Վաճառքի ինքնարժեք | (69,065) | (99,101) |
| **Համախառն շահույթ** | **16,020** | **43,665** |
| Իրացման ծախսեր | (3,220) | (34,551) |
| Վարչական ծախսեր | (19,761) | (38,551) |
| Այլ եկամուտ | 42,382 | 94,824 |
| Այլ ծախս | 13,672 | (6,722) |
| Ֆինանսական եկամուտ | 4 | 6 |
| Այլ օգուտ | 802 | 8 |
| **Զուտ շահույթ նախքան հարկումը** | **49,899** | **58,679** |
| Շահութահարկի գծով ծախս | (4,640) | 512 |
| **Շարունակվող գործառնություններից զուտ շահույթ** | **45,259** | **59,191** |

Համեմատական վերլուծությունը հեշտացնելու համար նախորդ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները վերաներկայացվել են՝ ներառելու դադարեցված գործառնությունների արդյունքները:

## 25. Իրական արժեք և Ռիսկերի կառավարում

**Իրական արժեք**

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին

**Ռիսկերի կառավարում**

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- Պարտքային ռիսկ,
- Իրացվելիության ռիսկ,
- Շուկայական ռիսկ,

Խմբի ղեկավարությունը իրականացնում է վերահսկողություն այդ ռիսկերից յուրաքանչյուրի գծով, որն ամփոփված է ստորև:

*Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտավորությունները Խմբի նկատմամբ, և այն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերից: Խումբը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Պարտավորությունների կատարման գծով ռիսկերի գնահատումներ իրականացվում են որոշակի սահմանները գերազանցող գումարներ պահանջող պայմանագրային կողմերի համար, բացառությամբ կապակցված կողմերի:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը.

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| **Տրամադրված վարկեր և փոխառություններ** | | |
| Տրամադրված վարկեր և փոխառություններ | 13,993,149 | 13,033,397 |
| **Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր** | | |
| Դեբիտորական պարտքեր, զուտ | 1,009,412 | 2,031,056 |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | | |
| Ցպահանջ մնացորդներ բանկում | 109,391 | 41,776 |

| | | |
|---|---|---|
| Կանխիկ՝ դրամարկղում | 41,954 | 40,677 |
| **Պարտքային ռիսկի ընդհանուր առավելագույն ազդեցությունը** | **15,153,906** | **15,146,906** |

*Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր*

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր պատվիրատուի առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև պատվիրատուների բազայի կառուցվածքը, ներառյալ այդ պատվիրատուների արդյունաբերության ճյուղերի ու երկրների դեֆոլտի ռիսկը,քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ պարտքային ռիսկի վրա, հատկապես ներկայիս տնտեսական պայմաններում:

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը՝ ըստ աշխարհագրական տարածաշրջանների.

| *(հազար դրամ)* | **2023թ.** | **2022թ.** |
|---|---|---|
| Տեղական | 1,009,412 | 2,031,056 |
| Արտերկիր | - | - |
| | **1,009,412** | **2,031,056** |

*Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ կազմակերպությունը կարող է ունենալ դժվարություններ իր ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակ: Իրացվելիության ռիսկը կառավարվում է ղեկավարության կողմից ամենօրյա հիմունքով:

Որպես կանոն, Խումբը ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը 60 օրվա ընթացքում ծածկելու համար՝ ներառյալ ֆինանսական պարտականությունների սպասարկման ծախսերը: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ կանխատեսել, օրինակ՝ բնական աղետները:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիկին ենթարկվածության և տրամադրված փոխառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների վերաբերյալ:

| | **2023թ.** | | **2022թ.** | |
|---|---|---|---|---|
| *(հազար դրամ)* | Համախառն արժեք | Ձևավորված պահուստ | Համախառն արժեք | Ձևավորված պահուստ |
| Տրված փոխառություններ | 14,033,603 | (40,454) | 13,033,397 | - |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 1,032,709 | (23,297) | 2,054,423 | (23,367) |
| Դրամական միջոցներ | 151,345 | - | 82,453 | - |
| | **15,217,657** | **(63,751)** | **15,170,273** | **(23,367)** |

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի իրական արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը բաղկացած է երկու տեսակի ռիսկերից՝ ա) տոկոսադրույքի և բ)արտարժույթի փոխարժեքի ռիսկերից: Շուկայական ռիսկի ներգործությանը ենթարկված ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրամադրված փոխառությունները, առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը:

ա) տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է շուկայական տոկոսադրույքի փոփոխության հետևանքով:

Խումբը չունի պաշտոնական քաղաքականություն և ընթացակարգեր տոկոսադրույքների ռիսկերի կառավարման համար, քանի որ ընկերությունը չունի լողացող տոկոսադրույքներով փոխառու միջոցներ ղեկավարությունը այդ ռիսկը համարում է աննշան Խմբի բիզնեսի համար:

բ) արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է արտարժույթների փոխարժեքի փոփոխության հետևանքով:

Խումբը ենթակա է արտարժույթային ռիսկի՝ ֆունկցիոնալ արժույթի և վաճառքների, գնումների և փոխառությունների արժույթների անհամապատասխանության հետևանքով:

Արժութային ռիսկի գծով ղեկավարությունը սահմանում է սահմանաչափեր ռիսկերի նկատմամբ խոցելիության մակարդակի համար՝ ըստ արժույթի և ընդհանուր առմամբ: Դիրքերը վերահսկվում են ամսական հիմունքով: Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված է արտարժույթի փոխարժեքի ռիսկի ազդեցությունը Ընկերության վրա հաշվետու ժամանակաշրջանի վերջում.

| *(հազար դրամ)* | 2023թ. | | |
|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | Եվրո | ՌԴ ռուբլի |
| Տրված փոխառություններ | 8,044,755 | 174,094 | 459,362 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | - | - | - |
| Դրամական միջոցներ | - | - | - |
| Վարկեր և փոխառություններ | (8,672,015) | - | (99,189) |
| | **(627,260)** | **174,094** | **360,173** |

| *(հազար դրամ)* | 2022թ. | | |
|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | Եվրո | ՌԴ ռուբլի |
| Տրված փոխառություններ | 6,061,818 | 163,273 | 570,629 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | - | - | - |
| Դրամական միջոցներ | - | - | - |
| Վարկեր և փոխառություններ | (8,349,827) | - | (113,711) |
| | **(2,288,009)** | **163,273** | **456,918** |

## 26. Պայմանականություններ

*Գործարար միջավայր*

Մաքսային օրենսդրությունը պարբերաբար տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների առարկա է հանդիսանում: Խումբը գտնում է, որ համապատասխան պետական կարգավորող մարմինների կողմից մեկնաբանությունները կարող են ազդել Խումբը գործարքների և գործունեության վրա: Հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում ընդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատման գծով, որի արդյունքում հնարավոր է, որ այն գործարքների և գործնեության հարկային հաշվառման նկատմամբ վերաբերմունքը փոխվի, որոնց նախկինում հարկային մարմինները չէին անդրադարձել: Որպես այդպիսին լրացուցիչ հարկերը, տույժերը և տուգանքները կարող են հարկային մարմինների կողմից հաշվարկվել: Խումբը գտնում է, որ 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը պատշաճ կերպով էր կատարում համապատասխան օրենքների պահանջները և Խմբի հարկային, արժութային և մաքսային դրությունը կայուն է:

*Ապահովագրություն*

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը, բացառությամբ տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությունից իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասից ապահովագրություն չունի:

*Հարկային միջավայր*

Հայաստանի Հանրապետության հարկային, արժութային և մաքսային օրենսդրությունը պարբերաբար տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների առարկա է հանդիսանում: Խումբը գտնում է, որ համապատասխան պետական կարգավորող մարմինների կողմից մեկնաբանությունները կարող են ազդել Խմբի գործարքների և գործունեության վրա: Հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում ընդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատման գծով, որի արդյունքում հնարավոր է , որ այն գործարքների և գործնեության

հարկային հաշվառման նկատմամբ վերաբերմունքը փոխվի, որոնց նախկինում հարկային մարմինները չէին անդրադարձել: Որպես այդպիսին լրացուցիչ հարկերը, տույժերը և տուգանքները կարող են հարկային մարմինների կողմից հաշվարկվել:

Խումբը գտնում է, որ 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը պատշաճ կերպով էր կատարում համապատասխան օրենքների պահանջները և Խմբի հարկային, արժութային և մաքսային դրությունը կայուն է:

*Դատական վարույթներ*

Խումբը ներգրավված չէ այնպիսի խոշոր դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իր ֆինանսական վիճակի վրա:

## 27. Գործարքներ կապակցված կողմերի միջև

*Վերահսկողություն*

Ընկերության վերահսկող է հանդիսանում նրա միակ բաժնետերը՝ Վահե Հովակիմյանը :
Ստորև ներկայացված են կապակցված կողմերի հետ գործարքները և մնացորդները.

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Տրված փոխառություններ | 1,910,468 | 1,478,632 |

| *(հազար դրամ)* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Աշխատավարձ | 9,936 | 910 |
| Ֆինանսական եկամուտ | 211,936 | 132,735 |

## 28. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

2024թ. Մարտի 20-ին Խումբը լուծարել է դուստր ընկերություն հանդիսացող «S-Stլեկոմ» ՍՊԸ, որը համախմբված է 2023թ. ֆինանսական հաշվետվություններում: Ընկերության 2023թ. և 2022թ. ֆինանսական արդյունքները մեկ գումարով ներկայացվել են Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում որպես ընդհատված գործառնությունների արդյունքներ:

Դուստր կազմակերպությանը վերաբերող գուդվիլը ամբողջությամբ արժեզրկվել է 2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում: